

**ԴԱՎԻԹ ԱՆԱՆՈՒՆԸ ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԻ ՈՒ
ԱՊԱԳԱՅԻ ՄԱՍԻՆ (1919 ԹՎԱԿԱՆ)**

Ինչպես հայտնի է, 1919 թ. սկզբներին հայ ժողովրդի գրական-մշակութային կյանքում մեծ իրադարձություն էր Հովհաննես Թումանյանի ծննդյան 50-ամյակի տոնակատարությունը: Փետրվարից մայիս փառավորապես նշվում է Ամենայն հայոց բանաստեղծի հոբելյանը. անդրկովկասյան մամուլում տպագրվում են բազմաթիվ հոդվածներ, կազմակերպվում՝ ամենատարբեր միջոցառումներ և այլն:

1920 թ. սկզբին Թիֆլիսում հրատարակված «Գրական-գեղարվեստական ալմանախ»-ի 5-րդ համարն ունի հետևյալ ընծայագիրը՝ «Հովհ. Թումանյանին՝ նրա ծննդյան 50-ամյակի առիթով»: Այլ նյութերի թվում այստեղ տպագրվել են նաև մի շարք գրողների կարծիքները հայ գրականության արդի վիճակի ու ապագայի մասին՝ ի պատասխան Ստ. Զորյանի կազմած հարցաշարի, որը կրում է «Հայ գրականության վիճակը (հայ գրողների կարծիքով)» խորագիրը: «Դեռ 1917 թ. վերջերին, երբ մեր գրական աշխարհում համեմատական կենդանություն կար և ռուսական հեղափոխությունը մեր առջև բացել էր պայծառ հեռանկարներ՝ ապագան դարձնելով դյութական մի երկիր, – այդ ժամանակ մեր մեջ միտք հղացավ մի հարցարանով (անկետով) դիմել մեր գրողներին ու քննադատներին և նրանց կարծիքն իմանալ հայ գրականության ներկայի ու ապագայի մասին, – նախաբանում գրում է հարցաթերթիկի հեղինակը: –Եվ այդ նպատակով կազմեցինք մի հարցարան: Սակայն քաղաքական ձախորդ իրադարձությունները և մեր ժողովրդի գլխին պայթած ահավոր աղետները, որ հիմն ի վեր կործանեցին ամեն տեսակ ծրագիր ու հղացում, անիրագործելի դարձրին և մեր ցանկությունը: Բայց ներկա թվին, երբ փոթորիկն անցավ կարծես, և մեր երկինքը փոքր-ինչ պարզվեց, մեր վաղեմի միտքը նորից այցելեց մեզ: Եվ այս անգամ արդեն այդ պատրաստի հարցարանով դիմեցինք մեր գրողներից նրանց, ովքեր այն ժամանակ գտնվում էին Թիֆլիսում, մնացած հեղինակներին, որ գտնվում էին Թիֆլիսից դուրս, անկարող եղանք դիմել՝ խզված հաղորդակցության պատճառով (ինչպես կտեսնենք ստորև, միակ բացառությունը եղել է Դ. Անանունը, որն այդ ժամանակ բնակվում էր Երևանում – Ա.Զ.)»¹: Այնուհետև ներկայացվում է հարցարանը.

«1) Ի՞նչ է Ձեր կարծիքը գեղեցիկ հայ գրականության ներկայի մասին.

ա) վիպասանություն, բ) դրամա, գ) քնարերգություն:

2) Ինչպե՞ս եք նայում գեղեցիկ հայ գրականության ապագային:

ա) Արդյոք, ներկան երաշխավորո՞ւմ է նրա ապագա առաջադիմությունը:

բ) Որո՞նք են, Ձեր կարծիքով, նրա գրավականները:

¹ Գրական-գեղարվեստական ալմանախ (Թիֆլիս), 1919, N 5, էջ 128:

3) Ի՞նչ կարծիք ունիք ռուսահայ ու թյուրքահայ գեղարվեստական բարբառների մասին:

ա) Ապագան այդ բարբառներից որի՞ն է պատկանում:

բ) Ցանկալի՞ է, արդյոք, նրանց ձուլումը. թե մեկի կամ թե մյուսի չքացումը:

4) Ի՞նչ կարծիք ունիք ժողովրդական բարբառների մասին»²:

Հարցարանին պատասխանել են Շիրվանզադեն (6 ապրիլի 1919 թ.), Հովհ. Թումանյանը (ամսաթիվը նշված չէ), Նար-Դոսը (30 մարտի 1919 թ.), Վ. Փափագյանը (8/26 ապրիլի 1919 թ.), Դ. Դեմիրճյանը (9 օգոստոսի 1919 թ.), Տ. Հովհաննիսյանը (10 ապրիլի 1919 թ.), Դ. Անանունը (18 հոկտեմբերի 1919 թ., Երևան)³, Հ. Սուրխաթյանը (ամսաթիվը նշված չէ)⁴:

Ստորև հրապարակում ենք հարցաշարին Դ. Անանունի տված ընդարձակ, բովանդակալից և ուշագրավ դիտարկումներով լեցուն պատասխանները:

ԱՆՈՒՇԱՎԱՆ ԶԱՔԱՐՅԱՆ

Բանասիրական գիտությունների դոկտոր

Դ. ԱՆԱՆՈՒՆԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ «ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎԻՃԱԿԸ (ՀԱՅ ԳՐՈՂՆԵՐԻ ԿԱՐԾԻՔՈՎ)» ՀԱՐՑԱՐԱՐԻՆ

Մեր գեղեցիկ գրականության ներկան որակում չունի այն պատճառով, որ ցայտուն անուններ ու գործեր չկան հրապարակի վրա: Մի երկու վիպական անուններ (Կ. Միքայելյան, Միք. Մանվելյան, Ստ. Զորյան) դեռևս գրչի հզորության չեն տիրացել և նույնիսկ դժվար է ասել, թե հայ միջավայրը կարող կլինի առնություն մատակարարել նրանց դալուկ վրձինին: Նույնը կարելի է կրկնել նաև դրամայի նկատմամբ (Վ. Վալադյան): Քնարերգության բնագավառում Վ. Տերյանի մուսան ահա քանի տարի է, որ խլացրել է մյուս ձայները: Մեր բոլոր մատաղ բանաստեղծները շարունակում են հարկ մատուցանել Վ. Տեր-

² Գրական-գեղարվեստական ամսանախ, 1919, N 5, էջ 128-129:

³ Ստ. Զորյանը գրող, հրատարակիչ, պոլիգրաֆիստ, խմբագիր Միսաք Էփրիկյանին 1919 թ. նոյեմբերի 5-ին Երևանից Թիֆլիս գրած նամակում հայտնում է. «...ուղարկում եմ ...Դ. Անանունի կարծիքը անկետայի առիթով: ...Սովորականից մի քիչ երկար է Դավիթի կարծիքը, բայց հետաքրքրական է» (Զորյան Ստ. 2010, Սրտի մտոք և հարգանք, կազմ. և ծան. Կ.Ս. Զորյան և Հ.Լ. Զորյան, խմբագիր՝ Ա.Գ. Ափինյան, Երևան, էջ 24):

⁴ Գրականագետ Ե. Մնացականյանը գրում է. «1919 թ. ուշագրավ մի ծեռնարկում է իրականացնում Ստ. Զորյանը: Հայ գրականության ներկա վիճակի գնահատման նպատակով գրողն իր կազմած հարցարանով դիմում է ժամանակի հայտնի դեմքերին: Ի թիվս այլ հարցերի՝ Զորյանը փորձում է ճշտել նրանց տեսակետը «ռուսահայ ու թրքահայ գեղարվեստական բարբառների մասին»: Պատասխանները ավելի քան հետաքրքիր են և խոսուն. ժամանակի մտավորականությունը մեծ հույսեր ուներ Հայաստանի ապագայի վերաբերյալ, և նրանց արտահայտած մտքերը լի էին հավատով դեպի հայոց լեզվի միասնական ամբողջականության կայացումը» (Մնացականյան Ե. 2017, Բանավեճերը գրական հայերենի շուրջ և Հովհաննես Թումանյանը (1890-1910-ական թթ.), Երևան, էջ 39):

յանի քնարով հարուցած մոտիվներին, մի հոգեվիճակ, որ մենք որակել ենք «մե-նության մղձավանջը» անունով⁵։ Երիտասարդ բանաստեղծների մեջ երջանիկ բացառություն է կազմում թյուրքահայ Վեսպերը, որը գիտե առնական նվագներ կերտել և դա շնորհիվ նրան, որ երգչի հոգուն տիրում է ցեղի ու հայրենիքի վերածնության կարոտը։

Ասացինք, որ հայ գեղեցիկ գրականության ներկան որակում չունի։ Ավելի ճիշտ կլինի ասել, որ այժմ տիրում է գեղեցիկ գրականության բացակայության շրջանը։ Սակայն մեր գրականության անցյալը և հին վարպետների դեռևս հնչվող ձայնը գրավական է, որ գրական պարապությունը երկար չպիտի շարունակվի։ Գեղեցիկ գրականությունը, ինչպես և հոգևոր մնացած կարգի երկե-րը պարապ և անօդ տարածության մեջ չեն ստեղծվում։ Պատերազմի, մեծ հեղափոխության և մեր ազգային ոգորումների հետևանքով կերտվում է հայ պատմության նոր շրջանը, որի նկատմամբ կարելի է լուսավոր գուշակություն-ներ անել։ Այդ նոր շրջանում իրար պիտի խառնվին երկու տարբեր ապրումներ – անցյալի հիշողությունները՝ լի թախիծով, սոսկումներով և ավստսանքով և ապագայի որոնումները, ուր մտքի վարանումը կցորդված կլինի խիզախության հետ։ Այստեղ հնարավոր է և՛ ռոմանտիզմը կրոնական շղարշով պարուրված և՛ ցայտուն ռեալիզմը։ Մեր ապագա տնտեսական ու քաղաքական միջավայրից շատ բան է կախված։ Կկարողանա՞ն արդյոք եղած հայ գրիչները նոր պայ-մաններում ունկնդիր հանդիսանալ նոր ծայներին, նկատել նոր ներկերը և ըստ այնմ լարել իրանց եռանդը, թե անցյալի անցուդարձերը, հին հասարակակարգի փլուզումը նրանց արդեն դարձրել է մտավոր անկարներ – այս հարցին դժվար է պատասխանել։ Հավանորեն մեր արդի գրողներից շատերը կապավինեն իրանց հիշողություններին։ Բայց և համոզված ենք, որ նրանց փոքրաթիվ մասը նոր կորովի ուժերի հետ սպասավոր կկանգնե նոր պահանջներին և կսպառե գրա-կան բացակայության այս շրջանը։ Մեր ազգի անսպառ և աննկուն աշխարհա-շեն եռանդն է մեզ իրավունք տալիս նման եզրակացության հանգեցնել։

Մեր ազգի քաղաքական ամբողջացումը, նրա հավաքումը միևնույն պե-տական հարկի տակ հրամայական է դարձնում ռուսահայ և թյուրքահայ բար-բառների ծովման խնդիրը։ Ազգը չի կարող տարբեր բարբառներ գործադրել պետական և հասարակական հաստատություններում և այստեղից էլ պիտի սկսվի ծուլողական աշխատանքը։ Գիտակցական, կազմակերպված վերաբեր-մունքը շատ բան կարող է անել այստեղ։ Հիշենք, որ դպրոցին վերապահված է խոշոր դեր։ Եթե հայկական երկու հատվածների հոգևոր ղեկավարները զլանան ձեռնամուխ լինելու բարբառների ծովման աշխատանքին, ապա հարցի լուծումը կմնա տարերքին, այսինքն՝ բնական մրցմանն ու զարգացմանը։ Լեզուն կեն-դանի է նրա գործածողների թվով։ Այս հանգամանքը պետք է որ գերակշռու-

⁵ Տե՛ս 1909 թ. «Նոր օրեր» (Բաքու) թերթում (մարտի 21, N 2, էջ 5-6) Դ. Անանունի «Մենության մղձավանջը (Վահան Տերյան՝ «Մթնշաղի անուրջներ»)» խորագրով գրախոսությունը, նաև՝ 1912 թ. «Մեր ուղին» (Բաքու) ժողովածուում (էջ 98-110) նրա ծավալուն գրախոսությունը Տերյանի «Բանաս-տեղծություններ»-ի առաջին հատորի վերաբերյալ՝ դարձյալ «Մենության մղձավանջը» վերնագրով։

թյուն տա նախկին ռուսահայերի բարբառին: Մյուս կողմից արդեն պարզ է, որ ռուսահայերը պիտի կազմեն հայկական պետականության (իբրև ապարատի) ողնաշարը: Սա էլ մի գրավական է, որ նրանց բարբառը առաջնության վիճակում պիտի լինի: Այսպիսով կան տվյալներ, որ այժմյանից նշմարելի են դարձնում ռուսահայ բարբառի գերիշխանությունը: Պարապ հարց է, թե ցանկալի՞ է բարբառների ձուլումը կամ նրանց մեկի չքացումը: Ուժեղը պիտի հաղթի և մենք հաղթությունը գուշակում ենք հոգուտ ռուսահայերի:

Հենց որ հայ լեզուն տեր ու տիրական ունեցավ, հենց որ հայ պետությունը հոգատար կանգնեց մեր «աննյութ գանձին», – հայ հոգևոր բարեմասնություններին, ապա դրանով վճիռ պիտի արձակվի նաև հայ ժողովրդական բարբառներին: Նրանցից ոչ մեկը հավակնություն չի ունենալ պետական լեզու դառնալու, բայց նրանցից ամեն մեկը կգա բառերով և պատկերավոր դարձվածքներով հարստացնելու մեր գրական լեզուն, նայած թե տվյալ ժողովրդական բարբառը որպիսի տաղանդով օժտված ներկայացուցիչ կտա մեր գրականությանը:

Մենք հավատով ենք նայում մեր գրականության ապագային: Հոգևոր զենքը երբեք հայը բաց չի թողել իր ձեռքից: Եվս առավել նա այդ չի կարող անել ազգերի և վարի խավերի ազատագրության պահուն, երբ խոսքին ու գրչին վերապահված է այնքան վճռողական, այնքան վիթխարի դեր: Եթե հայ մարդիկ հրաժարվեն քաղաքական փնթիությունից և պայծառ հայրենաշեն ծրագիր առաջադրեն մեր գրական ուժերին, ապա դրանով նրանք հրահրած կլինեն ազգի մեջ պահված ուժը, ստեղծելով գրական ճակատ, ուր կխամրի թույլը և հաղթական ճաճանչներ կարձակե հզորը⁶:

⁶ Գրական-գեղարվեստական պլանախ, 1919, N 5, էջ 141-143: Ի դեպ, 1920 թ. ապրիլի 29-ին Ստ. Զորյանի՝ Մ. Էփրիկյանին Երևանից Թիֆլիս գրած նամակում կարդում ենք. «Սիրելի Միսաք, // Բարի եղիր Դավիթի համար մի օրինակ «Ավանախ» ուղարկել: ...Դավիթը իր պատասխան գրվածքի համար (անկետայի) հոնորար է ուզում. նրա հաշվով բռնում է 380 ռ. հայկական դրամով» (Զորյան Ստ., նշվ. աշխ., էջ 31):